

European Association of Science Editors



ԳԻՏԵՎ (EASE – European Association of Science Editors) ուղեցույցը անգլերեն հրատարակվող գիտական հոդվածների հեղինակների ու թարգմանիչների համար

Ամփոփում

Խմբագրական այս համառոտ և դյուրընթեռնելի ուղեցույցը հրատարակվել է Գիտական խմբագիրների եվրոպական կազմակերպության կողմից (EASE) 2010 թ. և ամեն տարի թարմացվում է: Ուղեցույցը թարգմանվել է ավելի քան 20 լեզվով և բաց հասանելիությամբ տեղադրված է <https://ease.org.uk/publications/author-guidelines> կայքէջում: Նշված փաստաթղթի նպատակն է օգնել ողջ աշխարհի գիտնականներին հաջողությամբ ներկայացնել իրենց հետազոտությունների արդյունքները և անգլերեն ձեռագրերի որակյալ թարգմանություն ապահովել: Ուղեցույցը հակիրճ բացատրում է, թե ինչպես գրել լիարժեք, ամփոփ և հստակ աշխատանքներ ու ուշադրություն է բերում էթիկական խնդիրների վրա՝ (համա) հեղինակության չափանիշներ, գրագոյություն, շահերի բախում այլն: Ութ հավելվածները տեղեկություն կամ օրինակներ են պարունակում ընտրված թեմաների վերաբերյալ (*Abstracts, Ambiguity, Cohesion, Ethics, Plurals, Simplicity, Spelling* և *Text-tables*): ԳԻՏԵՎ ուղեցույցի լայն կիրառությունը պետք է բարձրացնի միջազգային գիտական հաղորդակցության արդյունավետությունը:

Միջազգային գիտական հաղորդակցության արդյունավետության բարձրացման համար գիտական հոդվածներն ու այլ հրատարակումները պետք է լինեն ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, ՀԱԿԻՐՃ ու ՀԱՄԿԱՆԱԼԻ՝ համաձայն ներքոնշարադրված բացատրության: Այս ընդհանրացված, բայց ոչ համընդհանուր ուղեցույցները նախատեսված են որպես օգնություն հեղինակներին, թարգմանիչներին ու խմբագիրներին: Կիրառելով այս կանոնները՝ հարկ է հետևել առողջ բանականությանը, քանի որ սոսկ կանոնների միջոցով լիովին կատարելության հասնելն արավոր չէ:

Նախ՝

- **Մանրամասնորեն ծրագրե՛ք և իրականացրե՛ք Ձեր հետազոտությունը** (օրինակ՝ [Hengel et al 2011](#)): Մի սկսեք հոդվածի վրա աշխատանքը, քանի դեռ վստահ չեք, որ Ձեր ձեռք բերած վերջնարդյունքները համեմատաբար կայուն ու ավարտուն են (O'Connor 1991), և որ կարող եք անել **հուսալի եզրահանգումներ**:
- Մինչ աշխատանքն սկսելը **խորհուրդ է տրվում ընտրելու ամսագիրը**, որում ցանկանալու եք տպագրել Ձեր հոդվածը: Համոզվեք, որ ամսագրի ընթերցողները Ձեր թիրախային լսարանն են ([Chipperfield et al 2010](#)): Ուշադիր նայե՛ք այդ ամսագրի կողմից հեղինակներին առաջարկվող ցուցումների ցանկը և Ձեր հոդվածն այնպես ծրագրե՛ք, որ

այն համապատասխանի ցուցումներում առկա պահանջներին՝ ծավալի, ձևաչափի, նկարների պահանջվող կամ պարտադիր քանակի և այլ առումներով:

Ձեռագրերը պետք է լինեն ԱՄԲՈՂՋԱԿԱՆ, այսինքն՝ դրանցից չպետք է բացակայի անհրաժեշտ տեղեկատվությունը: Հիշեք, որ **տեղեկատվությունը, որը ճիշտ՝ ընթերցողների ակնկալած տեղում է, առավել հեշտորեն է մեկնաբանվում, լուսաբանվում (Gopen & Swan 1990)**: Օրինակ՝ ներքոնշարադրյալ տեղեկատվությունը պետք է ընդգրկված լինի փորձարարական գիտական հոդվածների կազմում:

- **Վերնագիրը** պետք է լինի հստակ և հասկանալի նաև այլ ոլորտների մասնագետներին, նաև արտացոլի հոդվածի բովանդակությունը: Կոնկրետ եղեք՝ խուսափելով ընդհանուր և անորոշ արտահայտություններից (O'Connor 1991): Եթե անհրաժեշտ է, հիշատակե՛ք հետազոտության տեղը և ժամանակահատվածը, հետազոտվող օբյեկտի միջազգային գիտական անվանումը կամ էլ հետազոտության փորձարարական պլանը (այսինքն՝ կոնկրետ դեպքի ուսումնասիրություն, թե՛ պատահական վերահսկվող հետազոտություն): Եթե Ձեր հետազոտությունն ընդգրկել է միայն մեկ սեռի անձանց, ապա դա անպայմանորեն պիտի արտահայտված լինի վերնագրում: Կարիք չկա տեղեկատվությունը կրկնելու և՛ վերնագրում, և՛ ամփոփման մեջ (դրանք միշտ հրատարակվում են միասին), չնայած երբեմն հնարավոր չէ իսպառ բացառել կրկնությունները:
- **Հեղինակների ցուցակը**, այսինքն՝ այն մարդկանց ցանկը, որոնք նշանակալի ներդրում են ունեցել ծրագրման, տվյալների հավաքագրման կամ էլ արդյունքների մեկնաբանման գործում, **ինչպես նաև** գրել, ստուգել ու քննադատել են ձեռագիրը և համաձայն են ներկայացված վերջին տարբերակին, **և, ամենակարևորը**, պատրաստ են կրել պատասխանատվություն՝ աշխատանքում շարադրված բոլոր տեսակետների վերաբերյալ: Առաջին չափանիշին բավարարող յուրաքանչյուր հեղինակի հարկ է թույլ տալ մասնակցել ձեռագրի վերջին տարբերակի կազմման ու հաստատման գործընթացին ([ICMJE 2017](#)): Առաջինը նշվում են այն հեղինակների անունները, որոնք առավել մեծ ներդրում են ունեցել կատարված աշխատանքում: Հեղինակների անվանական հերթականությունը պետք է համաձայնեցվի հրատարակման ներկայացնելուց առաջ: Ցանկացած հետագա փոփոխություն հարկ է համաձայնեցնել բոլոր համահեղինակների հետ՝ հիմնավոր բացատրելով ամսագրի խմբագրին ([Battisti et al 2015](#), տես [COPE flowcharts](#)): (Համա)հեղինակների անունների հետ անհրաժեշտ է ներկայացնել (հետազոտության ընթացքում)

նրանց աշխատավայրի ու փաստացի բնակության հասցեի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն, որով հնարավոր կլինի նրանց հետ նամակագրական կապ հաստատել: Հարկ է ներկայացնել բոլոր համահեղինակների էլ- հասցեները, որպեսզի նրանց հետ հնարավոր լինի հեշտ կապվել: Մենք խրախուսում ու ողջունում ենք բոլոր հեղինակների գրանցումը ORCID հեղինակների առանձնահատուկ նույնականացման ցուցիչների համակարգում, որը կապ է ստեղծում հեղինակի և իր ուսումնասիրության միջև (<http://www.orcid.org>):

- **Ամփոփում:** Հակիրճ բացատրեք՝ ինչու է կատարվել հետազոտությունը (BACKGROUND), ինչ հարց(եր) է (են) քննարկվել (OBJECTIVES), ինչպես է կատարվել հետազոտությունը (METHODS), ինչ է բացահայտվել (RESULTS), գլխավոր տվյալներն ու նրանց միջև առնչությունները, Ձեր մեկնաբանություններն ու եզրահանգումները (CONCLUSIONS): Ամփոփումը պետք է **արտացոլի հոդվածի բովանդակությունը**, քանի որ ընթերցողների մեծ մասի համար այն լինելու է տվյալ հետազոտության վերաբերյալ գլխավոր տեղեկատվության աղբյուրը: Դուք պետք է օգտագործեք **բանալի բառերը** ամփոփման մեջ, որպեսզի հեշտացնեք Ձեր հոդվածի առցանց որոնումը բոլորի համար, ովքեր հետաքրքրված են հետազոտության արդյունքներով (շտեմարանների մեծմասն ընդգրկում են միայն հոդվածների վերնագրերն ու ամփոփումները): **Փորձարարական բնույթի հոդվածի ամփոփումը** պետք է լինի **ինֆորմատիվ** և ներառի ձեռք բերված արդյունքների նկարագրությունը (*տե՛ս Appendix: Abstracts կառուցվածքային ամփոփումների մասին*): Միայնակնարկային բնույթի աշխատություններում և այլ մեծածավալ հրատարակումներում ամփոփումը կարող է կրել ինդիկատիվ բնույթ, այսինքն՝ անհրաժեշտ է թվարկել հիմնական քննարկվող հարցերը, ոչ թե արդյունքները (CSE 2014): Ամփոփման մեջ աղյուսակների կամ նկարների հղումներ մի՛ արեք, քանի որ ամփոփումը նույնպես հոդվածից առանձին է տպագրվում: Չի թույլատրվում նաև հղում օգտագործված գրականությանը, եթե, իհարկե, դրանում ծայրահեղ անհրաժեշտություն չի առաջանում (այս դեպքում հարկ է փակագծերում ներկայացնել ամբողջական տեղեկատվությունը՝ հեղինակ, վերնագիր, տարեթիվ և այլն): Համոզվե՛ք, որ ամփոփման ներառող ողջ տեղեկատվությունը առկա է նաև բուն հոդվածում:
- **Բանալի բառեր:** Ընդգրկե՛ք բոլոր համապատասխան գիտական տերմինները կամ էլ միայն լրացուցիչ բանալի բառերը, որոնք չկան վերնագրում (եթե դա պահանջում են խմբագրությունից): Բանալի բառերը պետք է հստակ ու կոնկրետ լինեն: Ընդհանուր տերմիններ ընդգրկե՛ք միայն այն դեպքում, երբ Ձեր հետազոտությունը ունի միջգիտակարգային բնույթ (O'Connor 1991): Բժշկագիտական տեքստերում կիրառե՛ք տերմիններ, որոնք կարելի է գտնել MeSH Browser-ում: Շտեմա- բաններում և այլուր (Cerejo 2013) Ձեր հոդվածը արխիվացնելիս բոլոր բանալի բառերն ու այլ մետատվյալները միավորվում են մեկ ֆայլում (տե՛ս, օրինակ, *Inderscience 2013*):
- **Հասպտումների ցանկ:** Եթե խմբագրությունը պահանջում է, տվե՛ք հոդվածում կիրառված բոլոր հասպտումների սահմանումները (բացառություն են ոչ մասնագետներին հասկանալի սահմանումները):

- **Ներածություն:** Բացատրե՛ք հետազոտության անցկացման անհրաժեշտությունը, մատնանշե՛ք **հետազոտության նպատակները**, և, իհարկե, ցույց տվե՛ք, թե ինչ կոնկրետ հարց(եր)ի է այն ուղղված: **Մկսե՛ք առավել ընդհանուր դատողություններից և աստիճանաբար կենտ- բունացե՛ք Ձեր հետազոտության հարց(եր)ի վրա:** Եթե հնարավոր է, ձևակերպե՛ք այն **հիպոթեզը**, որը Դուք ստուգել եք:
- **Մեթոդները:** Մանրամասն նկարագրե՛ք, թե ինչպես է ընթացել հետազոտությունը (այսինքն՝ հետա- գոտության տիրույթը, տվյալների հավաքումը, չափա- նիշները, վերլուծության նյութի աղբյուրը, ընտրանքի մեծությունը (չափը), չափումների քանակը, հարցման մասնակիցների կամ դոնորների, բջիջների կամ հյուսվածքների դոնորների տարիքն ու սեռը, սարքավորումները, տվյալների վերլուծությունը, կիրառված վիճակագրական թեստերն ու համակարգչային ծրագրերը): **Հարկավոր է դիտարկել բոլոր այն գործոնները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ հետազոտության արդյունքների վրա:** Կենսաբանական բանկերից ստացված փորձարարական նյութերի աղբյուրները անհրաժեշտ է իշխատակել ամբողջական անվանումներով ու նույնականացման տվյալներով, եթե այդպիսիք կան (*Bravo et al 2013*): Երբ հղում եք անում այնպիսի մի մեթոդի, որը հրատարակված է ոչ անգլալեզու պարբերականում, կամ անհասանելի է, հանգամանակից նկարագրե՛ք այն: Համոզ- վե՛ք, որ Ձեր հետազոտությունը համապատասխանում է հիվանդների իրավունքների, կենդանիների վրակատարվող հետազոտությունների, շրջակա միջավայրի և այլնի առումով բարոյական չափանիշներին (օրինակ՝ *WMA2013*):
- **Արդյունքներ:** **Ներկայացրե՛ք հետազոտությամբ ձեռք բերված նոր արդյունքները** (ընդունված կարգ է, որ հրապարակված տվյալներն այստեղ չեն արտացոլվում): Բոլոր աղյուսակներն ու նկարները պետք է հիշատակվեն հոդվածի հիմնական տեքստում այն հերթականությամբ, ինչպես դրանք համարակալված ու տեղադրված են: Համոզ- վե՛ք, որ տվյալների վիճակագրական վերլուծությունը համարժեք է (օրինակ՝ *Habibzadeh 2013*): Մարդկանց, կենդանիների կամ մարդկանցից կամ կենդանիներից բխող ցանկացած գոյաձևի վերաբերյալ տվյալները պետք է բաժանվեն ըստ սեռի (տե՛ս *Heidari et al 2016*): Մի՛ կեղծեք, մի՛ աղավաղեք որևէ տվյալ և մի՛ բացառեք որևէ կարևոր տվյալ, մանիպուլյացիոն փոփոխությունների մի՛ ենթարկեք նկարները՝ կեղծ տպավորություն ստեղծելու նպատակով: Տվյալների այսպիսի փոխակերպումները կարող են դիտարկվել որպես **գիտական գեղձարարություն** (տե՛ս *COPE flowcharts*):
- **Քննարկում:** Այս հատվածը նոր արդյունքների ներկայացման տեղ չէ, ներառյալ վիճակագրական արդյունքները: **Տվե՛ք Ձեր հետազոտության հարցերի պատասխանները** (այն հարցերի, որոնք թվարկել եք ամփոփման վերջին հատվածում) և հնարավորինս օբյեկտիվորեն **համեմատե՛ք Ձեր ստացած հիմնական արդյունքները նախկինում հրատարակածների հետ:** Ցո՛ւյց տվե՛ք դրանց սահմանափակությունները՝ ընդգծելով Ձեր հիմնական եզրահանգումները: Եթե Ձեր հետազոտությունը միայն մեկ սեռի ներկայացուցիչ էր ներառում որպես օբյեկտ, քննարկե՛ք Ձեր արդյունքների երկու սեռերի վրա էլ տարածման հնարավորության հարցը: Դիտարկե՛ք ցանկացած եզրահանգում, որը չի համընկնում Ձեր տեսակետին: Ձեր դիրքորոշման հիմնավորման համար օգտագործե՛ք միայն մեթոդաբանորեն հիմնավորված

ապացույցներ (Roig 2015): Քննարկման ավարտին կամ էլ առանձին բաժնում ընդգծել էք Ձեր հիմնական եզրահանգումները և հետազոտության գործնական նշանակությունը:

▪ **Շնորհակալություն:** Հիշատակեք բոլորին, ովքեր նշանակալի ներդրում են ունեցել Ձեր հետազոտության իրականացման գործընթացում, բայց չեն կարող դիտարկվել որպես համահեղինակ և շնորհակալություն հայտնեք ֆինանսավորող բոլոր աղբյուրներին: Խորհուրդ է տրվում կիրառելու հետևյալ ձևաչափը- "This work was supported by the Medical Research Council [grant number xxxx]": Եթե առանձնահատուկ ֆինանսավորում չի եղել, ապա գործածել հետևյալ արտահայտությունը- "This research received no specific grant from any funding agency in the public, commercial, or not-for-profit sectors." (RIN 2008): Եթե կա դրա անհրաժեշտությունը, հայտնեք խմբագրությանը շահերի այլ բախման հանգամանքի մասին, այսինքն՝ հրատարակչի, կամ հրատարակման մեջ շահագրգիռ այլ կազմակերպության հետ ֆինանսական կամ անձնական կապերի մասին (Goozner et al 2009): Եթե օգտագործում եք նախկինում հրատարակված որևէ նյութ (օրինակ՝ նկարներ), ապա ստացել ք հեղինակ(ներ)ի համաձայնությունը և հիշատակեք նրան(ց) նկարի տակ նշումներում կամ շնորհակալության հատվածում: Եթե Ձեզ օգնել է օտար լեզվի տիրապետող որևէ մեկը (օրինակ՝ Ձեր խմբագիրը, կամ թարգմանիչը), վիճակագիր, տվյալների հավաքագրող, Ձեր օգնական(ներ)ը, ապա պարտավոր եք հիշատակել նրանց տեղեկատվական հասանելիության նպատակով (ICMJE 2017, Battisti et al 2015): Հարկ է նշել, որ նրանք պատասխանատվություն չեն կրում հոդվածի վերջնական տարբերակի համար: Դուք պետք է համոզված լինեք, որ այս բաժնում հիշատակված բոլոր անձինք համաձայն են իրենց մասին նշումներին տվյալ բաժնում (տե՛ս Appendix: Ethics):

▪ **Գրականության ցանկ:** Համոզվեք, որ ներկայացրել եք այլ հրատարակումներից վերցված ամբողջ տեղեկատվության աղբյուրների տվյալները: Գրականության ցանկում ներառել ք բոլոր այն տվյալները, որոնք անհրաժեշտ են տվյալ աղբյուրը գրադարանում կամ համացանցում գտնելու համար: Ոչ անզգալեզու հրատարակումների համար ներկայացրեք դրա սկզբնագրային (բնագրային) անվանումը (անհրաժեշտության դեպքում՝ անգլերենի կանոններին համապատասխան տառադարձությունը), ինչից հետո հնարավորության դեպքում տվեք վերջինիս անգլերեն թարգմանությունը՝ նշելով քառակուսի փակագծերում (CSE 2014): Խուսափեք մեջբերել անհա- սանելի, պարտադրող ու չհամապատասխանող հղումները: Այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, ակնարկի փոխարեն մեջբերեք հետազոտության հիմնական հոդվածները (DORA 2013): Չհրատարակված տեղեկատվությունը գրականության ցանկում չի ներառվում, եթե հարկ եք համարում հիշատակել, ապա դա պետք է արվի հոդվածի հիմնական տեքստում նախապես հեղինակի թույլտվությունը ստանալուց հետո, նաև պետք է բացատրել դրա աղբյուրը:

▪ **Հոդվածի այլ կառուցվածք:** Կարող է որպես լավագույն տարբերակ ներկայանալ տեսական հրատա- րակումների, ակնարկային աշխատանքների, կոնկրետ դեպքերի

հետազոտության և այլ տարբերակների համար (օրինակ՝ Gasparyan et al 2011):

- Որոշ հրատարակումներ ներառում են նաև այլ լեզվով ամփոփում կամ ընդլայնված **նկարագիր:** Մա հետազոտությունների շատ ոլորտների համար բավական կարևոր հանգամանք է:
- Հաջորդիվ ներկայացվող հաշվետվողական ցուցումները կօգնեն Ձեզ անհրաժեշտ նվազագույն տեղեկատվություն ներկայացնել Ձեր հետազոտության վերաբերյալ (տե՛ս, օրինակ, EQUATOR Network):
- Հետևե՛ք **ամսագրի կողմից հեղինակներին ներկայացվող պահանջների ցուցումներին՝** ամփոփման ծավալի, գրականության ցանկի, հղումների ռճի և այլնի վերաբերյալ:

Գրե՛ք ՆԱԿԻՐՃ՝ խնայելու համար գրախոսների և խմբագիրների ժամանակը:

- **Մի՛ ներառեք այնպիսի տեղեկատվություն,** որը առնչություն չունի ներածության մեջ սահմանված հարց(եր)ին:
- **Մի՛ պատճենեք** Ձեր՝ նախկինում հրատարակված աշխատանքների մասերը, մի՛ ուղարկեք նույն հոդվածը տարբեր ամսագրեր: Հակառակ դեպքում Ձեզ կարող են մեղադրել **ավելորդ հրատարակման** մեջ (տե՛ս COPE flowcharts): Այս կանոնը չի տարածվում այնպիսի նախնական տպագրությունների վրա, ինչպիսիք են գիտաժողովի թեզիսները (O'Connor 1991, տե՛ս նաև BioMed Central policy): Ավելին, **կրկնակի հրատարակումները** թույլատրելի են, եթե նախատեսված են լիովին այլ լսարանի համար (օրինակ՝ այլ լեզվով կամ կամ էլ մասնագետների կամ ընդհանուր լսարանի համար), և երկու ամսագրերի համաձայնությունն էլ առկա է (ICMJE 2017): Հրատարակման սկզբնական տարբերակի վրա հղումը պետք է բերված լինի վերահրատարակման տիտղոսա- թերթի տողատակում:
- Նախընտրելի է, որ բաժիններից մեկում տեղակայված տեղեկությունը չկրկնվի այլ բաժիններում: Ակնհայտ է, որ ամփոփումը, նկարների տակի նշումները և հոդվածի ավարտական պարբերությունը բացառություն են:
- Համոզվե՛ք, որ բոլոր աղյուսակներն ու նկարները պարզապես անհրաժեշտ են: Աղյուսակներում բերված տվյալները չպետք է կրկնվեն նկարներում և ընդհակառակը: Տվյալների երկար ցուցակները չպետք է կրկնվեն տեքստում:
- Աղյուսակների ու նկարների տակի նշումները պիտի լինեն **ինֆորմատիվ, բայց ոչ շատ երկար:** Եթե աղյուսակներում կամ նկարներում ներկայացված են միանման տվյալներ, ապա նշան ձևաչափը նույնպես պիտի միանման լինի: "Forests are very important ecosystems"-), ինչպես նաև այլ ավելորդ հատվածները (օրինակ՝ "It is well known that..."):
- Եթե **հաճախ կիրառում եք գիտական երկարաշունչ տերմին(ներ),** ապա հոդվածում առաջին կիրառման ժամանակ կրճատե՛ք ու հետագա շարադրանքում կիրառե՛ք համառոտագրված տարբերակը:
- Եթե կա անհրաժեշտություն, հայտնե՛ք Ձեր կասկածները, բայց **զերծ մնացեք ավելորդ խուսափո- դականությունից** (այսինքն՝ գրե՛ք «հնարավոր է», այլ ոչ թե «կարող է այնպես պատահել, որ...»): **Մի՛ արեք ավելորդ ընդհանուր եզրահանգումներ:**

▪ Եթե ամսագիրը կոնկրետ պահանջներ չի դնում, ապա **բոլոր համարակալումների համար թվեր գործածե՛ք**, այսինքն՝ նույնիսկ միանիշ համարակալումների համար՝ **բացառությամբ զրոյի և մեկի** (առանց համարակալման միավորների) և այնպիսի դեպքերի, որոնցում կարող են թյուրիմացություններ ի հայտ գալ, օրինակ՝ նախադասությունների սկզբնամասում կամ էլ թվեր պարունակող հասպակումներից առաջ (CSE 2014):

Հոդվածի դյուրընկալ ԴԱԲՁՆԵԼՈՒ համար գրե՛ք պարզ լեզվով. տեքստը պիտի լինի դյուրընթեռնելի:

Գիտական բովանդակություն

▪ **Հստակ տարբերակե՛ք Ձեր բնագրային տվյալներն ու հիպոթեզը** այլ մարդկանց, ինչպես նաև Ձեր՝ նախկինում հրատարակված տվյալներից ու հիպոթեզերից ամեն անգամ, երբ դա անհրաժեշտ է, ու հղումներ արե՛ք: Նպատակահարմար է հանրագումարի բերել կամ վերաշարադրել այլ աղբյուրներում առկա տեքստը: Սա վերաբերում է նաև թարգմանություններին: Տեքստը տառացիորեն պատճենելու դեպքում (օրինակ՝ ամբողջական նախադասություն կամ մեծ տեքստ), վերցրե՛ք այն չակերտների մեջ (օրինակ՝ Roig 2015, Kerans & de Jager 2010): Հակառակ դեպքում կարող եք վերածվել **գրագոյի կամ բովանդակություն վերաձևակերպողի** (չարդարացված, մեծածավալ նյութի, տվյալների ու նկարների և այլնի անտեղի վերամշակում կամ նույնիսկ ավելորդ հրատարակում, տե՛ս, օրինակ, COPE flowcharts և COPE guidelines):

▪ Հավաստիացե՛ք, որ կիրառել եք **անգլերեն գիտական ճիշտ տերմիններ** (ցանկալի է լեզվի կրող մասնագետների տեքստերի հիման վրա): Բառացի թարգմանությունները հաճախ սխալ են լինում (օրինակ՝ false friends, կամ էլ գոյություն չունեցող բառեր՝ հորինված թարգմանչի կողմից): Կասկածների առկայության դեպքում ստուգե՛ք սահմանումները անգլերեն բառարանների միջոցով, քանզի շատ բառեր սխալ են գործածվում (օրինակ՝ gender և trimester, տե՛ս *Appendix: Ambiguity*): Կարող եք բառը կամ բառակապակցությունը որոնել, օրինակ, Wikipedia-ում, ապա՝ համեմատել հայերեն արդյունքը անգլերենի հետ, հետո որոշել՝ արդյոք առաջարկված տերմինների նշանակությունները համընկնում են: Սակայն հարկավոր է հասկանալ, որ Wikipedia-ն ոչ միշտ է որպես հավաստի տեղեկատվության աղբյուր ներկայանում:

▪ Եթե բառը հիմնականում կիրառվում է թարգմանություններում և հազվադեպ է շրջանառվում անգլալեզու երկրներում, ապա դիտարկե՛ք դրան իմաստով համարժեք այլ, ավելի շատ կիրառվող բառով փոխարինելու տարբերակը (օրինակ՝ "phytocoenosis"-ի փոխարեն՝ "plant community"): Եթե գիտական տերմինը չունի անգլերեն համարժեք, ապա հստակ սահմանելուց հետո առաջարկե՛ք դրա ընդունելի թարգմանությունը:

▪ **Սահմանե՛ք բոլոր արտասովոր կամ բազմիմաստ տերմինները** դրանց առաջին կիրառման ժամանակ: Կարելի է թվարկել հոմանիշները, թե այդպիսիք կան (որոնման գործընթացը դյուրացնելու համար), սակայն հետագայում հստակության համար կիրառե՛ք միայն մեկ տերմին: Նախընտրելի է կիրառել գիտական կազմակերպությունների կողմից հաստատված ձևական տերմինա-

բանությունը (օրինակ՝ EASE 2013):

▪ **Նուսափե՛ք մանվածապատ պնդումներից**, որոնք ընթերցողին կմղեն ենթադրությունների դաշտ, թե ինչ եք նկատի ունեցել (*տե՛ս Appendix: Ambiguity*)

▪ Երբ տոկոսային տվյալներ եք ներկայացնում, հստակեցրե՛ք՝ **ինչ եք հասկանում 100 % ասելով**: Կորեկացիոն կապեր, հարաբերություններ և այլ տվյալներ նկարագրելիս հստակորեն նշե՛ք, թե ինչն եք ինչի հետ համեմատում:

▪ Աշխատե՛ք նախապատվությունը տալ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) միավորներին և Ցելսիուսի աստիճանակարգին:

▪ Անգլերենում, ի տարբերություն այլ լեզուների, **տասնորդական կոտորակներում** գործածվում է **կետ** (ոչ թե ստորակետ): Եթե ամսագիրը կոնկրետ պահանջ չունի այս հարցի վերաբերյալ, ապա այնպիսի թվերում, որոնք հիշյալ կետից աչ կամ ձախ 4 կամ ավելի նշաններ ունեն, կիրառե՛ք **նեղ բացաս** (ոչ թե ստորակետ) կետի աջից և ձախից 3 թվից բաղկացած խմբերի միջև (EASE 2013):

▪ Դարեր, ամիսներ և այլն նշելու համար **մի՛ գործածեք հռոմեական թվեր**, քանի որ դրանք սովորաբար անգլերենում չեն հանդիպում: Ամսաթվերի նշանակման անգլիական և ամերիկյան տարբերակների միջև առկա տարբերությունների պատճառով ամիսները նշելու համար կիրառե՛ք ամբողջ ամսանունը կամ առաջին 3 տառերը (CSE2014):

▪ Եթե թարգմանվում են քիչ հայտնի աշխարհագրական տեղանուններ, հնարավորության դեպքում հարկ է հիշատակել սկզբնական անվանումը օրինակ՝ "in the Kampinos Forest (Puszcza Kampinoska)": Այսպիսի դեպքերում ընթերցողների համար օգտակար կլինեն տեղակայվածության, կլիմայի և հավելյալ լրացուցիչ այլ տեղեկություններ:

▪ Հարկավոր է հիշել, որ տեքստը կարդալու են մեծ մասամբ օտարերկրյա ընթերցողները, որոնք կարող են և չիմանալ Ձեր երկրում հայտնի առանձնահատուկ պայմանները, դասակարգումներն ու հայեցակարգերը, այդ պատճառով հնարավոր է լրացուցիչ բացատրությունների կարիք առաջանա (*Ufnalska 2008*): Օրինակ՝ բավականին մեծ տարածում ունեցող *Erigenosis annua* մուլախոտը որոշ երկրներում անվանվում է *Stenactis annua*, դրա համար էլ անգլալեզու տեքստերում պիտի գործածվի միջազգայնորեն ընդունված անվանումը, իսկ հոմանիշները հիշատակվեն փակագծերում:

Տեքստի կառուցվածքը

Ընդհանուր առմամբ նախադասությունները չպետք է շատ երկարաշունչ լինեն, ինչպես նաև պիտի համեմատաբար պարզ կառուցվածք ունենան. ենթական մոտ լինի ստորոգյալին (*Gopen & Swan 1990*): Օրինակ՝ խուսափե՛ք վերացական գոյականներից և գրե՛ք. "X was measured...", այլ ոչ թե "Measurements of X were carried out..." (*տե՛ս Appendix: Simplicity*): Մի՛ չարաշահե՛ք կրավորական սեռի գործածությունը (օրինակ՝ Norris 2011): Թարգմանելիս փոփոխե՛ք նախադասության կառուցվածքը՝ միտքը առավելագույնս հստակ և ճշգրիտ փոխանցելու համար (*Burrough-Boenisch 2013*):

▪ **Տեքստը պիտի լինի կապակցված ու տրամաբանորեն կազմակերպված** ու արդյունքում հարմար լինի ընթերցման տեսանկյունից (*տե՛ս Appendix: Cohesion*):

- Նախընտրելի է, որ յուրաքանչյուր պարբերություն սկսվի ներածական նախադասությունից, որում պիտի ձևակերպվի հաղորդվող մտքի թեման, իսկ հաջորդող նախադասությունները պիտի զարգացնեն այն:
- Ի տարբերություն այլ լեզուների՝ անգլերենում թույլատրելի է գուգահեռ կառուցումների կիրառումը, քանզի դրանց շնորհիվ հասկացումն ու ընկալումը ավելի դյուրին են դառնում: Օրինակ՝ նման տվյալների համեմատության ժամանակ կարելի է գրել- "It was high in A, medium in B, and low in C", այլ ոչ թե- "It was high in A, medium for B, and low in the case C":
- **Աղյուսակներն ու նկարները պիտի դյուրընկալելի լինեն**, այսինքն՝ ընթերցողը դրանք հասկանալու համար չպետք է դիմի հոդվածի տեքստին: Դրանց մեջ մի՛ ընդգրկեք ոչ ինֆորմատիվ տվյալներ (այսինքն՝ ուղղակի ջնջե՛ք սյունակը, եթե այն պարունակում է կրկնվող տվյալներ բոլոր տողերում. դա կարելի է ուղղակի նշել տողատակում): Հապավումներն ու կրճատումները գործածե՛ք միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է համապատասխանեցման համար, կամ էլ տեղի սահմանափակության դեպքում: Նկարագրում կամ տողատակում վերծանե՛ք բոլոր հապավումներն ու կրճատումները, որոնց անվանումները ակնհայտ չեն (օրինակ՝ անճշտությունների սյունակը կարող է նշանակել ստանդարտ շեղում, սխալ կամ էլ վստահության միջակայք): Չնոռանաք **տասնորդական կոտորակներում օգտագործել կետ** (այլ ոչ թե ստորակետ), ըստ անհրաժեշտության՝ **նշել նաև չափման առանցքներն ու միավորները**:
- Դիտարկե՛ք **տեքստային աղյուսակների** կիրառման հնարավորությունը, եթե գործ ունեք տվյալների ոչ մեծ խմբի հետ (Kozak 2009), (տե՛ս *Appendix: Text-tables*):
- Երկար ցուցակներում (հապավումներ, կրճատումներ և այլն) բաղադրիչներն ավելի նպատակահարմար է իրարից անջատել կետ-ստորակետերով (;), ինչը միջանկյալ դիրք է զբաղեցնում վերջակետի ու ստորակետի միջև:

Լեզուն կարևոր է...

- Եթե գիտական տերմինաբանության խիստ անհրաժեշտություն չկա, ապա գործածե՛ք **հայտնի բառեր**: Բայց խուսափե՛ք խոսակցական և դարձվածքային արտահայտություններից, ինչպես նաև, այսպես կոչված, պատկերավոր բայերից (օրինակ՝ find out, pay off), քանի որ այս բայերը սովորաբար վատ են ընկալում մարդիկ, որոնց համար անգլերենը մայրենի լեզու չէ (Geercken 2006):

Սահմանե՛ք հապավումներն ու կրճատումները հոդվածի տեքստում դրանց առաջին կիրառման ժամանակ (եթե կա կասկած, որ ընթերցողները կարող են չհասկանալ): Մի՛ չարաշահեք կրճատումների ու հապավումների քանակը, քանի որ տեքստը կդառնա ղժվարընկալելի: Մի՛ կրճատեք Ձեր տեքստում հազվադեպ պատահող տերմին-ներն ու հասկացությունները: **Ամփոփման մեջ աշխատե՛ք չգործածել հապավումներ ու կրճատումներ:**

- Ձեր կամ այլ հետազոտողների կողմից ձեռք բերված արդյունքները կամ էլ Ձեր հետազոտության գործընթացը նկարագրելիս կիրառե՛ք **անցյալ ժամանակը**: **Ներկա ժամանակը** նպատակահարմար է գործածել միայն ընդհանուր պնդումների ու դրույթների դեպքում (օրինակ՝ վիճակագրական հավաստիություն, եզրահանգումներ) կամ

էլ Ձեր հոդվածի բովանդակությունը նկարագրելիս, հատկապես աղյուսակներում ու նկարներում (Gastel & Day 2016):

- Եթե ամսագիրը ուղղակիորեն չի պահանջում, **Ձեր մասին խոսելիս մի՛ գործածեք "the authors" տերմինը**, քանի որ սա միանշանակ չի ընկալվի: Դրա փոխարեն անհրաժեշտության դեպքում գրեք "we", կամ "I" կամ էլ գործածե՛ք "in this study", "our results" կամ "in our opinion" կապակցությունները (օրինակ՝ Hartley 2010, Norris 2011): Հարկ է շեշտել, որ "this study" արտահայտությունն արդա- բացված է միայն այն դեպքում, երբ նկատի ունեք Ձեր ներկայացրած նոր տվյալները: Եթե նկատի ունեք նախորդ պարբերության մեջ հիշատակված հրատարակումները, գրե՛ք "that study": Եթե հիշատակում եք մեջբերված հրատարակման հեղինակներին, ապա գրե՛ք "those authors":
- Հիշե՛ք, որ գիտական տեքստերում "which" բառը պետք է կիրառել անորոշ լրացումներում այն դեպքում, երբ "that" բառը՝ որոշչային կառույցներում (այսինքն՝ «մարդիկ, որոնք...»):
- Եթե գործածում եք **երկիմաստ բառեր**, ապա համոզվե՛ք, որ տեքստի շարադրանքից դրանց իմաստը պարզ ու ակնհայտ է: Ստուգե՛ք և համոզվե՛ք, որ բոլոր **բայերի ու իրենց գոյականների համաձայնությունը ճիշտ է** (այսինքն՝ եզակի կամ հոգնակի), և հասկանալի է, թե **դերանուններն ինչին են վերաբերում** (սա շատ կարևոր է թարգմանված տեքստերի համար): Հիշե՛ք, որ որոշ գոյականներ ունեն **հոգնակիակազմության յուրահատուկ կանոններ (Stu Appendix: Plurals)**
- Տեքստը բարձրաձայն կարդացե՛ք՝ կետադրությունը ստուգելու համար: **Հնչերանգային բոլոր դադարները**, որոնք անհրաժեշտ են տեքստի ճշգրիտ ընկալման համար, հարկ է տարանջատել ստորակետերով (այսինքն՝ հստակեցնում ենք տարբերությունը "no more data are needed"-ի և "no, more data are needed"-ի միջև):
- **Ուղղագրության մեջ եղե՛ք հետևողական**, պահպանե՛ք բառերի ու ամսաթվերի գրառման կա՛մ անգլիական, կա՛մ էլ ամերիկյան կանոններին (այսինքն՝ "21 Jan 2009" բրիտանական, և "Jan 21, 2009" ամերիկյան անգլերենում) (*տե՛ս Appendix: Spelling*): Ավելի ճիշտ կլինի ստուգել, թե ամսագիրը, որին Դուք պատրաստվում եք հոդված ուղարկել, ամերիկյան, թե՛ բրիտանական անգլերենի ուղղագրությունն է նախընտրում, և հոդվածը ձևակերպելիս առաջնորդվե՛ք դրանով:
- Խնդրե՛ք որևէ խորագետ գործընկերոջ կարգալ ողջ տեքստը՝ ոչ միանշանակ ընկալվող հատվածները բացահայտելու նպատակով:

Թարգմանությունը՝ Աշոտ Գևորգյանի
Translation: Ashot Gevorgyan (ashot.gev@ysu.am)

Օգտագործված հիմնական և օժանդակ գրականության ցանկ
 AuthorAID Resource Library. <http://www.authoraid.info/resource-library>
 Baranyiová E. 2013. Correct terminology in science: the role of editors. Science Editor 36 (2): 63. <http://www.councilscienceeditors.org/wp-content/uploads/v36n2p63.pdf>
 Battisti WP, Wager E, Baltzer L, Bridges D, Cairns A, Carswell CI, et al 2015. Good publication practice for communicating company-sponsored medical research: GPP3. *Annals of Internal Medicine* 163(6):461-464. <https://doi.org/10.7326/M15-0288>
 Beverley P. 2015. *Word macros for writers and editors*. <http://www.archivepub.co.uk/TheBook>
 BioMed Central policy on duplicate publication. <http://www.biomedcentral.com/submissions/editorial-policies#duplicate+publication>
 Bravo E, Calzolari A, De Castro P, Mabile L, Napolitani F, Rossi AM, Cambon-Thomsen A. 2015. Developing a guideline to standardize the citation of bioresources in journal articles

- (CoBRA). *BMC Medicine* 13:33. <https://doi.org/10.1186/s12916-015-0266-y>
- Burrough-Boenisch J. 2013. Editing texts by non-native speakers of English. In: European Association of Science Editors. *Science editors' handbook*. Smart P, Maisonneuve H, Polderman A. <http://www.ease.org.uk/publications/science-editors-handbook/>
- Cerejo C. 2013. How to make your paper more accessible through self-archiving. Editage Insights. <http://www.editage.com/insights/how-to-make-your-paper-more-accessible-through-self-archiving>
- Chipperfield L, Citrome L, Clark J, David FS, Enck R, Evangelista M, et al 2010. Authors' Submission Toolkit: a practical guide to getting your research published. *Current Medical Research & Opinion* 26(8):1967-1982. <https://doi.org/10.1185/03007995.2010.499344>
- [COPE flowcharts] Committee on Publication Ethics flowcharts. <http://publicationethics.org/resources/flowcharts>
- [COPE guidelines] Committee on Publication Ethics. Text recycling guidelines for editors https://publicationethics.org/files/Web_A29298_COPE_Text_Recycling.pdf
- [CSE] Council of Science Editors, Style Manual Committee. 2014. *Scientific style and format: the CSE manual for authors, editors, and publishers*. 8th ed. University of Chicago Press. <http://www.scientificstyleandformat.org/Home.html>
- [DORA] San Francisco Declaration on Research Assessment. 2013. <http://www.ascb.org/dora/>
- [EASE] European Association of Science Editors. 2012. EASE Toolkit for Authors. <http://www.ease.org.uk/publications/ease-toolkit-authors>
- [EASE] European Association of Science Editors. 2013. *Science editors' handbook*. 2nd ed. Smart P, Maisonneuve H, Polderman A, editors. <http://www.ease.org.uk/publications/science-editors-handbook/>
- EQUATOR Network. <http://www.equator-network.org/>
- Gasparyan AY, Ayzvazyan L, Blackmore H, Kitas GD. 2011. Writing a narrative biomedical review: considerations for authors, peer reviewers, and editors. *Rheumatology International* 31(11):1409-1417. <https://doi.org/10.1007/s00296-011-1999-3>
- Gastel B, Day RA. 2016. How to write and publish a scientific paper, 8th edition. Santa Barbara: ABC-CLIO
- Geercken S. 2006. Challenges of (medical) writing for the multilingual audience. *Write Stuff* 15(2):45-46. <http://journal.emwa.org/documents/journal/TWS/TWS%202006%202%2015.pdf>
- Goozner M, Caplan A, Moreno J, Kramer BS, Babor TF, Husser WC. 2009. A common standard for conflict of interest disclosure in addiction journals. *Addiction* 104:1779-1784. <https://doi.org/10.1111/j.1360-0443.2009.02594.x>
- Gopen GD, Swan JA. 1990. The science of scientific writing: if the reader is to grasp what the writer means, the writer must understand what the reader needs. *American Scientist* 78(6):550-558. <https://www.americanscientist.org/blog/the-long-view/the-science-of-scientific-writing>
- Habibzadeh F. 2013. Common statistical mistakes in manuscripts submitted to biomedical journals. *European Science Editing* 39(4):92-94. <http://europeanscienceediting.eu/issues/394/>
- Hartley J. 2010. Citing oneself. *European Science Editing* 36(2):35-37. http://www.ease.org.uk/sites/default/files/may_2010_362.pdf
- Heidari S, Babor TF, De Castro P, Tort S, Curno M. 2016. Sex and Gender Equity in Research: rationale for the SAGER guidelines and recommended use. *Research Integrity and Peer Review* 1:2. <https://doi.org/10.1186/s41073-016-0007-6>
- Hengl T, Gould M, Gerritsma W. 2012. *The unofficial guide for authors: from research design to publication*. Wageningen, Arnhem. http://www.lulu.com/spotlight/t_hengl
- Hull E. 2015. Health-related scientific articles in the 21st century: give readers nuggets! Vught, Netherlands: Professional English. <https://www.givereadersnuggets.nl/>
- [ICMJE] International Committee of Medical Journal Editors. 2017. *Recommendations for the Conduct, Reporting, Editing, and Publication of Scholarly Work in Medical Journals*. http://www.icmje.org/urm_main.html
- [Inderscience] Inderscience Publishers. 2013. Keyword requirements. <http://www.inderscience.com/info/insitemap.php>
- Kerans ME, de Jager M. 2010. Handling plagiarism at the editor's desk. *European Science Editing* 36(3): 62-66. http://www.ease.org.uk/sites/default/files/ese_aug10.pdf
- Kozak M. 2009. Text-table: an underused and undervalued tool for communicating information. *European Science Editing* 35(4):103. http://www.ease.org.uk/sites/default/files/november_2009_354.pdf
- Marusic M. 2014. Gender and sex in medical research. *European Science Editing* 40(2):56. http://www.ease.org.uk/sites/default/files/corresp_2.pdf
- [MeSH Browser] Medical Subject Headings Browser. <http://www.nlm.nih.gov/mesh/MBrowser.html>
- Norris C. 2011. The passive voice revisited. *European Science Editing* 37(1):6-7. http://www.ease.org.uk/sites/default/files/february_2011_371.pdf
- O'Connor M. 1991. *Writing successfully in science*. London: Chapman & Hall.
- Research Methods Supercourse. <http://www.pitt.edu/~super1/ResearchMethods/index.htm>
- [RIN] Research Information Network. 2008. Acknowledgement of funders in journal articles. <http://www.rin.ac.uk/system/files/attachments/Acknowledgement-funders-guidance.pdf>
- Roig M. 2015. *Avoiding plagiarism, self-plagiarism, and other questionable writing practices: a guide to ethical writing*. Office of Research Integrity <http://ori.hhs.gov/education/products/plagiarism/0.shtml>
- Seifert KA, Crous PW, Frisvad JC. 2008. Correcting the impact factors of taxonomic journals by Appropriate Citation of Taxonomy (ACT). *Persoonia* 20:105. <https://doi.org/10.3767/003158508X324236>
- Ufnalska S. 2008. Abstracts of research articles: readers' expectations and guidelines for authors. *European Science Editing* 34(3):63-65. http://www.ease.org.uk/sites/default/files/august_2008343.pdf
- [WMA] World Medical Association. 2013. *Declaration of Helsinki – ethical principles for medical research involving human subjects*. <https://www.wma.net/wp-content/uploads/2016/11/DoH-Oct2013-JAMA.pdf>

Appendix: Abstracts

European
Association of
Science
Editors

EASE

Key elements of abstracts

Researchers are quite often in a “box” of technical details – the “important” things they focus on day in and day out. As a result, they frequently lose sight of 4 items essential for any readable, credible, and relevant IMRaD¹ article: the point of the research, the research question, its answer, and the consequences of the study.

To help researchers to get out of the box, I ask them to include 5 key elements in their research report and in their abstract. I describe briefly the elements below and illustrate them with a fictitious abstract.

Key element 1 (BACKGROUND): the point of the research – why should we care about the study? This is usually a statement of the BIG problem that the research helps to solve and the strategy for helping to solve it. It prepares the reader to understand the specific research question.

Key element 2 (OBJECTIVES): the specific research question – the basis of credible science. To be clear, complete and concise, research questions are stated in terms of relationships between the variables that were investigated. Such specific research questions tie the story together – they focus on credible science.

Key element 3 (METHODS): a precise description of the methods used to collect data and determine the relationships between the variables.

